ՏԵՂԵԿԱՆՔ

«ԱԶԳԱՅԻՆ ԺՈՂՈՎԻ ԿԱՆՈՆԱԿԱՐԳ» ՍԱՀՄԱՆԱԴՐԱԿԱՆ ՕՐԵՆՔՈՒՄ ԱՌԱՋԱՐԿՎՈՂ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԵՎ ԼՐԱՑՈՒՄՆԵՐԻ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ

Հոդված 3. Պատգամավորի իրավունքները

1. Պատգամավորն իրավունք ունի՝

1) հանդես գալու օրենսդրական նախաձեռնությամբ.

2) ներկայացնելու Ազգային ժողովի որոշման, հայտարարության, ուղերձի նախագիծ.

3) ելույթներ ունենալու, հարցեր տալու և առաջարկներ ներկայացնելու Ազգային ժողովի, նրա հանձնաժողովների, աշխատանքային խմբերի նիստերում, ինչպես նաև խորհրդարանական լսումներում.

4) գրավոր հարցեր ուղղելու Կառավարությանը.

5) բանավոր հարցերով դիմելու Կառավարության անդամներին.

6) զբաղեցնելու իր կարգավիճակով պայմանավորված պաշտոններ.

7) ընդգրկվելու մշտական կամ ժամանակավոր հանձնաժողովի աշխատանքային խմբի կազմում.

8) ընդգրկվելու իր հանձնաժողովի ստեղծած ենթահանձնաժողովի կազմում.

9) դուրս գալու խմբակցության կազմից.

10) ծանոթանալու Ազգային ժողովին, իր խմբակցությանը կամ հանձնաժողովին հասցեագրված ցանկացած փաստաթղթի, բացառությամբ անվանական կամ անձնական նյութերի, ինչպես նաև պետական գաղտնիք պարունակող այնպիսի տեղեկության, որին իրավասու չէ իրազեկվելու.

11) հարցումներով և առաջարկներով դիմելու պետական և տեղական ինքնակառավարման մարմիններ ու պաշտոնատար անձանց.

11.1) դիմելու Ազգային ժողովի պատգամավորական էթիկային առնչվող հարցերով ժամանակավոր հանձնաժողովին (այսուհետ՝ Էթիկայի հանձնաժողով).

12) ունենալու երկու օգնական, որոնցից մեկը վճարովի, իսկ մյուսը՝ հասարակական հիմունքներով:

2. Պատգամավորի իրավունքների իրականացման կարգը սահմանվում է Կանոնակարգով, «Հայաստանի Հանրապետության Ազգային ժողովի պատգամավորի գործունեության երաշխիքների մասին» ~~Հայաստանի~~

~~Հանրապետության օրենքով~~ օրենքով և Ազգային ժողովի աշխատակարգով (այսուհետ՝ Աշխատակարգ):

3. Պատգամավորի գործունեության երաշխիքները սահմանվում են «Հայաստանի Հանրապետության պատգամավորի գործունեության երաշխիքների մասին» ~~Հայաստանի Հանրապետության օրենքով~~ օրենքով և այլ օրենքներով:

Հոդված 4. Պատգամավորի պարտականությունները

1. Պատգամավորը պարտավոր է՝

1) ընդգրկվել մեկ մշտական հանձնաժողովի կազմում, բացառությամբ Կանոնակարգի 11-րդ հոդվածի 7-րդ մասով նախատեսված դեպքերի.

2) մասնակցել Ազգային ժողովի, ինչպես նաև իր անդամակցած հանձնաժողովի և աշխատանքային խմբի նիստերին.

3) մասնակցել իր անդամակցած հանձնաժողովի հրավիրած խորհրդարանական լսումներին.

4) պահպանել պատգամավորական էթիկայի կանոնները.

4. 1) ապահովել շահերի բախման իրավիճակի համար սահմանված պահանջների կատարումը.

5) ապահովել պատգամավորական մանդատի անհամատեղելիության պահանջների կատարումը.

6) կազմակերպել քաղաքացիների ընդունելություն, ինչպես նաև իր լիազորությունների շրջանակում օրենքով սահմանված կարգով պատասխանել քաղաքացիների գրավոր առաջարկներին.

7) պահպանել Ազգային ժողովի նստավայրի տարածքում և շենքում գործող անվտանգության կանոնները:

2. Պատգամավորական էթիկայի կանոնները, շահերի բախման իրավիճակի համար պահանջները, ինչպես նաև պատգամավորական մանդատի անհամատեղելիության պահանջների կատարման կարգը սահմանվում են «Հայաստանի Հանրապետության Ազգային ժողովի պատգամավորի գործունեության երաշխիքների մասին» օրենքով:

Հոդված 5. Ազգային ժողովի նախագահը

1. Ազգային ժողովի նախագահը ներկայացնում է Ազգային ժողովը և ապահովում նրա բնականոն գործունեությունը:

2. Ազգային ժողովի նախագահը՝

1) նախագահում է Ազգային ժողովի նիստերը.

2) գումարում է Ազգային ժողովի արտահերթ նիստեր և նստաշրջաններ.

3) շրջանառության մեջ է դնում Ազգային ժողովի քննարկմանը ներկայացված հարցերը և նշանակում է գլխադասային հանձնաժողով.

4) Հանրապետության նախագահին է ուղարկում Ազգային ժողովի ընդունած օրենքները, ինչպես նաև Սահմանադրության փոփոխությունների նախագիծը հանրաքվեի դնելու վերաբերյալ Ազգային ժողովի որոշումները.

4.1) Սահմանադրության 129-րդ հոդվածի 3-րդ մասով նախատեսված դեպքում ստորագրում և հրապարակում է Ազգային ժողովի ընդունած օրենքը.

4.2) Սահմանադրության 202-րդ հոդվածի 2-րդ մասով նախատեսված դեպքում հրապարակում է Ազգային ժողովի ընդունած Սահմանադրության փոփոխությունները.

5) ստորագրում և հրապարակում է Ազգային ժողովի որոշումները, հայտարարությունները և ուղերձները.

6) հրավիրում և նախագահում է Խորհրդի նիստերը.

7) Ազգային ժողովի և Խորհրդի հաստատմանն է ներկայացնում հերթական նստաշրջանի և նիստերի օրակարգերի նախագծերը.

8) ստորագրում և հրապարակում է Խորհրդի որոշումները.

9) հաստատում է Ազգային ժողովի հանձնաժողովների կազմերը և դրանցում փոփոխությունները.

10) կարող է Ազգային ժողովի նախագահի տեղակալին տալ Ազգային ժողովի բնականոն գործունեության ապահովմանն ուղղված հանձնարարություններ.

11) ըստ անհրաժեշտության հրավիրում է քաղաքական խորհրդակցություններ.

12) տնօրինում է Ազգային ժողովի նյութական միջոցները.

13) նշանակում և ազատում է զբաղեցրած պաշտոններից՝ Ազգային ժողովի աշխատակազմի (այսուհետ՝ Աշխատակազմ) ղեկավարին, աշխատակազմի ղեկավարի տեղակալներին.

13.1) հաստատում է Աշխատակազմում քաղաքացիական ծառայության պաշտոնների անձնագրերը, ինչպես նաև նշանակում և ազատում է զբաղեցրած պաշտոններից Աշխատակազմում քաղաքացիական ծառայության ղեկավար

պաշտոնների 1-ին, 2-րդ և 3-րդ ենթախմբի պաշտոն զբաղեցնող քաղաքացիական ծառայողներին.

14) հաստատում է Աշխատակազմի հաստիքացուցակը և աշխատողների պաշտոնային դրույքաչափերը.

15) իրավասու մշտական հանձնաժողովի նախագահի ներկայացմամբ հաստատում է Ազգային ժողովի բյուջետային գրասենյակի (այսուհետ՝ Բյուջետային գրասենյակ) փորձագետներին ներկայացվող պահանջները, ինչպես նաև նրանց պաշտոնների նկարագրերը.

16) (կետն ուժը կորցրել է 21.01.20 ՀՕ-46-Ն)

17) կարող է հրավիրել խորհրդարանական լսումներ՝ սահմանելով դրանց անցկացման կարգը.

18) կարող է ձևավորել հասարակական հիմունքներով գործող խորհրդակցական մարմիններ.

19) նշանակում է Սահմանադրական դատարանում Ազգային ժողովի ներկայացուցիչ.

20) կարող է ընտրությունների ժամանակ դիտորդական առաքելություն իրականացնելու հրավեր ուղարկել դիտորդական առաքելություն իրականացնելու իրավունք ունեցող միջազգային կազմակերպություններին և օտարերկրյա հասարակական կազմակերպություններին.

21) հաստատում է Ազգային ժողովի նստավայրի տարածքում և շենքում գործող անվտանգության կանոնները.

21. 1) Էթիկայի հանձնաժողովի եզրակացության և որոշման հիման վրա պատգամավորի նկատմամբ կիրառում է կարգապահական միջոց.

22) պարգևատրում է Հայաստանի Հանրապետության Ազգային ժողովի պատվո մեդալով, Հայաստանի Հանրապետության Ազգային ժողովի պատվոգրով, Հայաստանի Հանրապետության Ազգային ժողովի նախագահի շնորհակալագրով, Հայաստանի Հանրապետության Ազգային ժողովի նախագահի հուշամեդալով, Հայաստանի Հանրապետության Ազգային ժողովի նախագահի հուշանվերով, ինչպես նաև խրախուսում է դրամական պարգևատրմամբ.

23) նշանակում է Հայաստանի Հանրապետության պետական մրցանակների մրցանակակիր ընտրող հանձնաժողովների և մրցանակաբաշխության կոմիտեի անդամի թեկնածու առաջադրելու իրավասություն ունեցող Ազգային ժողովի մշտական հանձնաժողով:

3. Իր լիազորություններն իրականացնելիս Ազգային ժողովի նախագահն ընդունում է որոշումներ և կարգադրություններ, որոնք երկու աշխատանքային օրվա ընթացքում տեղադրվում են Ազգային ժողովի պաշտոնական ինտերնետային կայքում (www.parliament.am), բացառությամբ պետական կամ օրենքով պահպանվող այլ գաղտնիք պարունակողների:

Հոդված 8. Խմբակցության լիազորությունները

1. Խմբակցությունն իրավունք ունի Կանոնակարգով սահմանված կարգով՝

1) հանդես գալու օրենսդրական նախաձեռնությամբ.

2) Ազգային ժողովի քննարկմանը ներկայացնելու Ազգային ժողովի որոշման, հայտարարության կամ ուղերձի նախագիծ.

3) իր առաջադրած օրենքի նախագիծը համարելու առաջնահերթ.

4) քաղաքական կոալիցիա կազմելու այլ խմբակցությունների հետ, ինչպես նաև դուրս գալու կոալիցիայից.

5) մշտական հանձնաժողովի նախագահի կամ նրա տեղակալի իրեն վերապահված պաշտոնում առաջադրելու թեկնածու.

6) Ազգային ժողովի հանձնաժողովում իրեն վերապահված տեղում նշանակելու խմբակցության անդամի, ինչպես նաև նրան փոխելու.

6.1) Էթիկայի հանձնաժողովի նախագահի կամ նրա տեղակալի իրեն վերապահված պաշտոնում նշանակելու խմբակցության անդամի, ինչպես նաև նրան փոխելու.

6.2) նշանակելու Էթիկայի հանձնաժողովում խմբակցության անդամին փոխարինող.

7) առաջադրելու վարչապետի թեկնածու.

8) իրավասու մշտական հանձնաժողովին առաջադրելու թեկնածուներ Ազգային ժողովի կողմից ընտրվող կամ նշանակվող պաշտոններում.

9) առաջադրելու Բարձրագույն դատական խորհրդի անդամի թեկնածու.

9.1) օրենքով նախատեսված դեպքերում առաջադրելու ինքնավար մարմնի անդամի պաշտոնում թեկնածու.

9.2) Կանոնակարգի 146-րդ հոդվածի 2.2-րդ մասով նախատեսված դեպքում Ազգային ժողովի խորհրդին առաջադրելու ինքնավար մարմնի անդամի պաշտոնում

թեկնածուների ընտրության համար ձևավորվող մրցութային խորհրդի անդամի թեկնածու.

9.3) հակակոռուպցիոն կոմիտեի նախագահի թեկնածուների ընտրության համար ձևավորվող մրցութային խորհրդի (այսուհետ՝ Մրցութային խորհուրդ) կազմում անդամ նշանակելու վերաբերյալ դիմումն ստանալուց հետո՝ եռօրյա ժամկետում, Ազգային ժողովի խորհրդին առաջադրելու Մրցութային խորհրդի անդամի թեկնածու.

10) գրավոր հարցապնդումներով դիմելու Կառավարության անդամներին.

11) ներկայացնելու առաջարկներ Սահմանադրության փոփոխությունների, օրենքի, Ազգային ժողովի որոշման, հայտարարության կամ ուղերձի նախագծի վերաբերյալ.

12) նշանակելու և փոխելու Խորհրդում իր ներկայացուցչին.

13) իր անդամին առաջարկելու միջազգային խորհրդարանական կազմակերպության, ինչպես նաև միջխորհրդարանական հանձնաժողովում Ազգային ժողովի կամ այլ պաշտոնական պատվիրակության կազմում.

14) իր անդամին առաջարկելու Ազգային ժողովի բարեկամական խմբի կազմում.

15) հրավիրելու խորհրդարանական լսումներ.

16) իր անդամին խմբակցությունից հեռացնելու:

2. Իր լիազորություններն իրականացնելիս խմբակցությունն ընդունում է որոշումներ:

3. Խմբակցության որոշումներն ընդունվում են քվեարկությանը մասնակցած խմբակցության անդամների ձայների մեծամասնությամբ, եթե քվեարկությանը մասնակցել է խմբակցության անդամների ընդհանուր թվի կեսից ավելին:

3.1. Կանոնակարգով ուղղակիորեն նախատեսված դեպքերում Ազգային ժողովի խմբակցությունների կոնսենսուսով որոշումը համարվում է ընդունված, եթե միևնույն որոշումը կայացրել են Ազգային ժողովի բոլոր խմբակցությունները:

4. Ընդդիմադիր խմբակցությունն ունի Կանոնակարգով սահմանված գործունեության երաշխիքներ:

~~ԳԼՈՒԽ 6~~

~~ԺԱՄԱՆԱԿԱՎՈՐ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎՆԵՐԸ~~

ԳԼՈՒԽ 6

ԱՌԱՆՁԻՆ ՕՐԵՆՔՆԵՐԻ, ԱԶԳԱՅԻՆ ԺՈՂՈՎԻ ՈՐՈՇՈՒՄՆԵՐԻ, ՀԱՅՏԱՐԱՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԵՎ ՈՒՂԵՐՁՆԵՐԻ ՆԱԽԱԳԾԵՐԻ ՀԱՐՑԵՐՈՎ ԺԱՄԱՆԱԿԱՎՈՐ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԸ

Հոդված 16. ~~Ժամանակավոր~~ Առանձին նախագծի հարցով ժամանակավոր հանձնաժողովի ստեղծումը

~~1. Ժամանակավոր հանձնաժողովը կարող է ստեղծվել առանձին օրենքների, Ազգային ժողովի որոշումների, հայտարարությունների և ուղերձների նախագծերի, ինչպես նաև պատգամավորական էթիկային առնչվող հարցերի քննարկման և դրանց վերաբերյալ Ազգային ժողով եզրակացություններ ներկայացնելու համար:~~

1. Առանձին նախագծի հարցով ժամանակավոր հանձնաժողովը կարող է ստեղծվել առանձին օրենքների, Ազգային ժողովի որոշումների, հայտարարությունների և ուղերձների նախագծերի վերաբերյալ Ազգային ժողով եզրակացություններ ներկայացնելու համար:

2. ~~Ժամանակավոր~~ Առանձին նախագծի հարցով ժամանակավոր հանձնաժողովը ստեղծվում է Ազգային ժողովի որոշմամբ, որի նախագիծը ներկայացնելու իրավունքն ունի խմբակցությունը:

3. ~~Ժամանակավոր~~ Առանձին նախագծի հարցով ժամանակավոր հանձնաժողովի անդամների թիվը սահմանվում է Ազգային ժողովի որոշմամբ, իսկ հանձնաժողովի կազմը և դրանում փոփոխությունները հաստատում է Ազգային ժողովի նախագահը՝ Կանոնակարգի 11-րդ հոդվածի 2-6-րդ մասերով սահմանված սկզբունքներին համապատասխան:

4. ~~Ժամանակավոր~~ Առանձին նախագծի հարցով ժամանակավոր հանձնաժողով ստեղծելու մասին Ազգային ժողովի որոշմամբ սահմանվում են հանձնաժողովի անվանումը, գործունեության ժամկետը, ինչպես նաև նրա իրավասությանը վերապահված նախագծի ~~կամ պատգամավորական էթիկային առնչվող հարցի վերաբերյալ եզրակացությունների ներկայացման ժամկետները~~ վերաբերյալ Ազգային ժողով եզրակացություն ներկայացնելու ժամկետը:

4.1. Ազգային ժողովի նախագահը առանձին նախագծի հարցով ժամանակավոր հանձնաժողովի ստեղծման մասին Ազգային ժողովի որոշումն ստորագրում և հրապարակում է անհապաղ:

5. Առանձին նախագծի հարցով ժամանակավոր հանձնաժողովի ստեղծումից հետո նրան են անցնում գլխադասային հանձնաժողովի իրավասությունները և գործառույթները:

6. Առանձին նախագծի հարցով ժամանակավոր հանձնաժողովի գործունեության ժամկետը մինչև վեց ամիս է, որը կարող է հանձնաժողովի առաջարկությամբ՝ Ազգային ժողովի որոշմամբ, երկարաձգվել հանձնաժողովի իրավասությանը վերապահված նախագծի քննարկման համար անհրաժեշտ ժամանակահատվածով:

~~7. Պատգամավորական էթիկայի հարցով ժամանակավոր հանձնաժողովի գործունեության ժամկետը մինչև երկու ամիս է, որը կարող է հարցի քննարկումն ավարտելու նպատակով մինչև մեկ ամսով երկարաձգվել հանձնաժողովի առաջարկությամբ՝ Ազգային ժողովի որոշմամբ:~~

Հոդված 17. ~~Ժամանակավոր~~ Առանձին նախագծի հարցով ժամանակավոր հանձնաժողովի գործունեությունը

1. Առանձին նախագծի հարցով ժամանակավոր հանձնաժողովն իր իրավասության շրջանակում իրականացնում է գլխադասային հանձնաժողովի, ինչպես նաև մշտական հանձնաժողովին վերապահված մյուս լիազորությունները:

~~2. Պատգամավորական էթիկայի հարցերով ժամանակավոր հանձնաժողովն իր իրավասության շրջանակում՝~~

~~1) քննարկում և Ազգային ժողով եզրակացություն է ներկայացնում իր իրավասությանը վերապահված հարցի վերաբերյալ.~~

~~2) կարող է հարցմամբ դիմել պետական և տեղական ինքնակառավարման մարմիններ ու պաշտոնատար անձանց.~~

~~3) հարցմամբ կարող է պահանջել և օրենքով սահմանված կարգով ստանալ հանձնաժողովում քննարկվող հարցին առնչվող անհրաժեշտ նյութեր ու փաստաթղթեր.~~

~~4) կարող է հանձնաժողովում քննարկվող հարցի փաստական հանգամանքների ուսումնասիրման համար պատվիրել փորձաքննություններ և ստանալ դրանց արդյունքում կազմված եզրակացությունները:~~

~~3. Պատգամավորական էթիկայի հարցերով ժամանակավոր հանձնաժողովի պահանջած տեղեկությունները և եզրակացությունները պետք է նրան ուղարկվեն հարցումն ստանալուց հետո՝ երկշաբաթյա ժամկետում, եթե հարցման մեջ ավելի երկար ժամկետ նշված չէ, կամ հարցման հասցեատերը հանձնաժողովի պահանջը կատարելու համար ողջամիտ ժամկետ չի առաջարկում: Հանձնաժողովի անդամները հարցմամբ պահանջվող տեղեկություններին առնչվող նյութերին կամ փաստաթղթերին կարող են ծանոթանալ նաև դրանց գտնվելու վայրում:~~

~~4. Պետական, առևտրային կամ օրենքով պահպանվող այլ գաղտնիք պարունակող տեղեկությունները պատգամավորական էթիկայի հարցերով ժամանակավոր հանձնաժողովի հարցմամբ հանձնաժողովին են տրամադրվում, իսկ հանձնաժողովի անդամներն այդ տեղեկություններին կարող են ծանոթանալ օրենքով սահմանված կարգով:~~

~~5. Պատգամավորական էթիկային առնչվող հարցի վերաբերյալ ժամանակավոր հանձնաժողովի եզրակացությունն Ազգային ժողովի նիստում չի քննարկվում և տեղադրվում է Ազգային ժողովի պաշտոնական ինտերնետային կայքում:~~

6. ~~Ժամանակավոր~~ Առանձին նախագծի հարցով ժամանակավոր հանձնաժողովի նիստերն անցկացվում են մշտական հանձնաժողովների համար Կանոնակարգի ~~15-րդ հոդվածով~~ 14-րդ և 15-րդ հոդվածներով սահմանված կարգին համապատասխան:

~~7. Պատգամավորական էթիկայի հարցերով ժամանակավոր հանձնաժողովի նիստերը փակ են, իսկ հերթական նիստերը գումարվում են հանձնաժողովի կամ նրա նախագահի սահմանած օրերին: Հանձնաժողովի նիստին ներկա լինելու իրավունք ունեն միայն հանձնաժողովի անդամները, հանձնաժողովի նախագահի կամ հանձնաժողովի որոշմամբ հրավիրված անձինք, ինչպես նաև այն պատգամավորը, որի վերաբերյալ հարցը հանձնաժողովը քննում է: Հանձնաժողովի նիստն իրավազոր է, եթե նիստին ներկա է (գրանցվել է) հանձնաժողովի անդամների ընդհանուր թվի կեսից ավելին, և նիստը նախագահում է հանձնաժողովի նախագահը, իսկ նրա բացակայության կամ պաշտոնը թափուր լինելու դեպքում՝ նրա տեղակալը կամ հանձնաժողովի կողմից որոշված անդամը: Հանձնաժողովի որոշումներն ընդունվում են հանձնաժողովի անդամների ընդհանուր թվի ձայների մեծամասնությամբ:~~

8. ~~Ժամանակավոր~~ Առանձին նախագծի հարցով ժամանակավոր հանձնաժողովն ունի իր աշխատակարգը, որը, Խորհրդի սահմանած օրինակելի աշխատակարգին համապատասխան, հաստատվում է հանձնաժողովի որոշմամբ:

Հոդված 18. ~~Ժամանակավոր~~ Առանձին նախագծի հարցով ժամանակավոր հանձնաժողովի նախագահը և նրա տեղակալը

1. ~~Ժամանակավոր~~ Առանձին նախագծի հարցով ժամանակավոր հանձնաժողովի նախագահը և նրա տեղակալն ընտրվում են հանձնաժողովի որոշմամբ:

2. ~~Ժամանակավոր~~ Առանձին նախագծի հարցով ժամանակավոր հանձնաժողովի նախագահն ունի մշտական հանձնաժողովի նախագահի՝

Կանոնակարգի 13-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին, 2-րդ, 6-11-րդ կետերով սահմանված լիազորությունները, ինչպես նաև ղեկավարում է հանձնաժողովի գործունեության մասնագիտական սպասարկումն իրականացնող անձանց աշխատանքը:

3. ~~Ժամանակավոր~~ Առանձին նախագծի հարցով ժամանակավոր հանձնաժողովի նախագահի բացակայության կամ պաշտոնը թափուր լինելու դեպքում նրան փոխարինում է տեղակալը, իսկ դրա անհնարինության դեպքում՝ հանձնաժողովի որոշմամբ լիազորված հանձնաժողովի անդամը:

Հոդված 19. ~~Ժամանակավոր~~ Առանձին նախագծի հարցով ժամանակավոր հանձնաժողովի լիազորությունների ավարտը

1. ~~Ժամանակավոր~~ Առանձին նախագծի հարցով ժամանակավոր հանձնաժողովի լիազորություններն ավարտվում են նրա գործունեության ժամկետն ավարտվելու կամ լուծարվելու դեպքում:

2. Առանձին նախագծի հարցով ժամանակավոր հանձնաժողովի լիազորությունները դադարում են նաև նրա իրավասությանը վերապահված նախագիծն ընդունվելու կամ շրջանառությունից դուրս գալու այլ դեպքում:

~~3. Պատգամավորական էթիկայի հարցերով ժամանակավոր հանձնաժողովի լիազորությունները դադարում են նաև հետևյալ դեպքերում.~~

~~1) պատգամավորական էթիկային առնչվող հարցի վերաբերյալ հանձնաժողովի եզրակացությունն Ազգային ժողով ներկայացվելու պահից.~~

~~2) այն պատգամավորի լիազորությունների դադարման կամ դադարեցման դեպքում, որի վերաբերյալ հարցը հանձնաժողովը քննում է:~~

4. ~~Ժամանակավոր~~ Առանձին նախագծի հարցով ժամանակավոր հանձնաժողովը կարող է լուծարվել Ազգային ժողովի որոշմամբ, որի նախագիծը ներկայացնելու իրավունք ունի խմբակցությունը:

ԳԼՈՒԽ 6.1

ԷԹԻԿԱՅԻ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԸ

Հոդված 19.1. էթիկայի հանձնաժողովի ստեղծումը

1. Պատգամավորական էթիկային առնչվող հարցերի քննարկման և դրանց վերաբերյալ Ազգային ժողով եզրակացություններ ներկայացնելու համար Ազգային ժողովի որոշմամբ կարող է ստեղծվել էթիկայի հանձնաժողով:

2. Նորընտիր Ազգային ժողովի առաջին էթիկայի հանձնաժողովը ստեղծվում է առաջին նստաշրջանում, իսկ նոր էթիկայի հանձնաժողովը որպես կանոն՝ նախորդ

Էթիկայի հանձնաժողովի գործունեության ժամկետի ավարտից ոչ շուտ, քան երեք ամիս առաջ, և ոչ ուշ, քան մեկ ամիս առաջ կամ նախորդ Էթիկայի հանձնաժողովի լուծարվելուց հետո՝ երեք ամսվա ընթացքում:

3. Էթիկայի հանձնաժողովի գործունեության ժամկետը մեկ կամ երկու տարի է:

4. Եթե նոր Էթիկայի հանձնաժողովը ստեղծվում է մինչև նախորդ Էթիկայի հանձնաժողովի գործունեության ժամկետի ավարտը, ապա այդ հանձնաժողովի գործունեության ժամկետը սկսվում է նախորդ Էթիկայի հանձնաժողովի գործունեության ժամկետի ավարտին հաջորդող օրվանից:

5. Էթիկայի հանձնաժողովը կարող է ունենալ զույգ թվով, բայց ոչ պակաս, քան վեց և ոչ ավելի, քան 12 անդամ:

6. Կառավարող և ընդդիմադիր խմբակցությունները Էթիկայի հանձնաժողովում ունեն հավասար թվով անդամներ ներկայացնելու իրավունք:

7. Խմբակցությունները Էթիկայի հանձնաժողովում ունեն առնվազն մեկական անդամ նշանակելու իրավունք: Կառավարող և ընդդիմադիր խմբակցություններին հասանելիք մյուս տեղում (տեղերում) Էթիկայի հանձնաժողովի անդամ (անդամներ) նշանակելու իրավունքը համապատասխանաբար՝ կառավարող և ընդդիմադիր խմբակցությունների միջև բաշխվում է հաջորդաբար՝ մեծաթվից փոքրաթիվ:

8. Էթիկայի հանձնաժողովի նախագահին և նրա տեղակալին հաջորդաբար նշանակելու իրավունք ունեն ընդդիմադիր և կառավարող խմբակցությունները: Հանձնաժողովի նախագահ կամ նրա տեղակալ նշանակելու իրավունքը համապատասխանաբար՝ կառավարող և ընդդիմադիր խմբակցությունների միջև բաշխվում է հաջորդաբար՝ մեծաթվից փոքրաթիվ: Եթե հանձնաժողովի նախագահին նշանակելու իրավունքը վերապահված է՝

1) ընդդիմադիր խմբակցություններին, ապա նախագահի տեղակալին նշանակելու իրավունքը վերապահվում է կառավարող խմբակցություններին

2) կառավարող խմբակցություններին, ապա նախագահի տեղակալին նշանակելու իրավունքը վերապահվում է ընդդիմադիր խմբակցություններին:

9. Հանձնաժողովի գործունեության ժամկետի յուրաքանչյուր վեցերորդ ամսվա ավարտից հետո՝ նշանակվում է հանձնաժողովի նոր նախագահ և նախագահի նոր տեղակալ:

10. Էթիկայի հանձնաժողովի անդամների թիվը, գործունեության ժամկետը, Ազգային ժողովի յուրաքանչյուր խմբակցությանը վերապահված հանձնաժողովի անդամի (անդամների) տեղը (տեղերը), ինչպես նաև հանձնաժողովի գործունեության ժամկետում խմբակցությունների միջև հանձնաժողովի նախագահ, նախագահի տեղակալ նշանակելու իրավունքի բաշխումը սահմանվում են Էթիկայի հանձնաժողովի ստեղծման մասին Ազգային ժողովի որոշմամբ, որի նախագիծը ներկայացնելու իրավունքն ունի խմբակցությունը: Եթե ներկայացվել են մեկից ավելի նախագծեր, ապա դրանք քննարկվում են Կանոնակարգի 112-րդ հոդվածի 2-րդ մասով սահմանված կարգով:

11.Ազգային ժողովի նախագահը Էթիկայի հանձնաժողովի ստեղծման մասին Ազգային ժողովի որոշումն ստորագրում և հրապարակում է անհապաղ:

Հոդված 19. 2. Էթիկայի հանձնաժողովի կազմավորումը

1. Էթիկայի հանձնաժողովի կազմը և դրանում փոփոխությունները հաստատում է Ազգային ժողովի նախագահը, եթե պահպանված են սույն հոդվածի 2-11-րդ մասերով սահմանված սկզբունքները:

2. Խմբակցության անդամը խմբակցությանը վերապահված Էթիկայի հանձնաժողովի անդամի տեղում, ինչպես նաև հանձնաժողովի նախագահի կամ նրա տեղակալի պաշտոնում նշանակվում և հանձնաժողովի կազմից դուրս է գալիս խմբակցության որոշմամբ:

3. Խմբակցությունը իրեն վերապահված տեղում (տեղերում) Էթիկայի հանձնաժողովի անդամ (անդամներ) նշանակում է հանձնաժողովի ստեղծման մասին Ազգային ժողովի որոշումն ընդունվելուց, ինչպես նաև հանձնաժողովի անդամի պատգամավորական լիազորությունները դադարելուց կամ դադարեցվելուց հետո՝ մեկշաբաթյա ժամկետում: Նույն ժամկետում իրավասու խմբակցությունը նշանակում է հանձնաժողովի անդամին փոխարինողի, ով ստանձնում է հանձնաժողովի այդ անդամի պարտականությունները՝ նրա ինքնաբացարկի, ինչպես նաև բացառապես նրա հիվանդությամբ կամ գործուղմամբ պայմանավորված՝ հանձնաժողովի աշխատանքներին մասնակցելու անհնարինության դեպքերում: Հանձնաժողովի անդամ և նրան փոխարինող նշանակելու մասին խմբակցության որոշումն Ազգային ժողովի նախագահին է ներկայացվում դրա ընդունումից հետո՝ մեկ աշխատանքային օրվա ընթացքում:

4. Խմբակցությունը իրեն վերապահված պաշտոնում Էթիկայի հանձնաժողովի նախագահին կամ նրա տեղակալին նշանակում է՝

1) հանձնաժողովի ստեղծման մասին Ազգային ժողովի որոշումն ընդունվելուց հետո՝ մեկշաբաթյա ժամկետում

2) ոչ շուտ, բան հանձնաժողովի գործունեության ժամկետի յուրաքանչյուր վեցերորդ ամսվա ավարտին նախորդող տասներորդ օրը և ոչ ուշ, բան այդ ժամկետի ավարտից հինգ աշխատանքային օր առաջ

3) հանձնաժողովի նախագահի կամ նրա տեղակալի պատգամավորական լիազորությունները դադարելուց կամ դադարեցվելուց հետո՝ մեկշաբաթյա ժամկետում:

5. Եթե Ազգային ժողովն ունի մեկ կառավարող կամ մեկ ընդդիմադիր խմբակցություն և այդ խմբակցությունը սույն հոդվածի 3-րդ մասով սահմանված ժամկետում իրեն վերապահված տեղում (տեղերում) հանձնաժողովի անդամ (անդամներ) կամ սույն հոդվածի 4-րդ մասով սահմանված ժամկետում իրեն

վերապահված պաշտոնում՝ հանձնաժողովի նախագահ կամ նրա տեղակալ չի նշանակում, ապա այն մնում է թափուր:

6. Եթե Ազգային ժողովի կառավարող կամ ընդդիմադիր խմբակցությունները մեկից ավելի են և իրավասու կառավարող կամ ընդդիմադիր խմբակցությունը՝

1) սույն հոդվածի 3-րդ մասով սահմանված ժամկետում իրեն վերապահված տեղում (տեղերում) Էթիկայի հանձնաժողովի անդամ (անդամներ) չի նշանակում, ապա այդ տեղում (տեղերում) հանձնաժողովի անդամ (անդամներ) նշանակելու իրավունքն անցնում է համապատասխանաբար՝ անդամների առավել մեծ թվով հաջորդ կառավարող կամ ընդդիմադիր խմբակցությանը: Եթե սույն հոդվածի 3-րդ մասով սահմանված ժամկետը լրանալուց հետո՝ մեկշաբաթյա ժամկետում, որևէ իրավասու խմբակցություն կառավարող կամ ընդդիմադիր խմբակցություններին վերապահված տեղում (տեղերում) հանձնաժողովի անդամ (անդամներ) չի նշանակում, ապա այդ տեղը (տեղերը) մնում են թափուր

2) սույն հոդվածի 4-րդ մասով սահմանված ժամկետում իրեն վերապահված պաշտոնում Էթիկայի հանձնաժողովի նախագահ կամ նրա տեղակալ չի նշանակում, ապա այդ պաշտոնում հանձնաժողովի նախագահ կամ նրա տեղակալ նշանակելու իրավունքն անցնում է համապատասխանաբար՝ անդամների առավել մեծ թվով հաջորդ կառավարող կամ ընդդիմադիր խմբակցությանը: Եթե սույն հոդվածի 4-րդ մասով սահմանված ժամկետը լրանալուց հետո՝ մեկշաբաթյա ժամկետում, որևէ իրավասու խմբակցություն կառավարող կամ ընդդիմադիր խմբակցություններին վերապահված պաշտոնում հանձնաժողովի նախագահ կամ նրա տեղակալ չի նշանակում, ապա այդ պաշտոնը մնում է թափուր:

7. Էթիկայի հանձնաժողովի կազմը հաստատվում է իրավասու խմբակցությունների կողմից հանձնաժողովի անդամների առնվազն երկու երրորդին, ինչպես նաև հանձնաժողովի նախագահին կամ նրա տեղակալին նշանակելուց հետո՝ երկու աշխատանքային օրվա ընթացքում:

8. Էթիկայի հանձնաժողովի կազմում փոփոխությունները հաստատվում են իրավասու խմբակցության կողմից հանձնաժողովի նոր անդամ կամ նոր նախագահ, նախագահի նոր տեղակալ նշանակելուց հետո՝ երկու աշխատանքային օրվա ընթացքում:

9. Եթե Էթիկայի հանձնաժողովի նոր նախագահը կամ նախագահի նոր տեղակալը նշանակվում է մինչև հանձնաժողովի նախորդ նախագահի կամ նախորդ նախագահի տեղակալի լիազորությունների ավարտը, ապա հանձնաժողովի նոր նախագահը կամ նախագահի նոր տեղակալն իրենց պարտականությունների կատարումը ստանձնում են հանձնաժողովի նոր կազմը կամ կազմում փոփոխությունները հաստատվելուց հետո, սակայն ոչ շուտ, քան հանձնաժողովի

նախորդ նախագահի կամ նախորդ նախագահի տեղակալի լիազորությունների ավարտը:

10. Էթիկայի հանձնաժողովի կազմը հաստատվելուց հետո՝

1) հանձնաժողովի անդամ նշանակելու խմբակցության իրավունքը պահպանվում է մինչև հանձնաժողովի լիազորությունների ավարտը.

2) հանձնաժողովի նախագահ կամ նրա տեղակալ նշանակելու խմբակցության իրավունքը պահպանվում է մինչև հանձնաժողովի գործունեության ժամկետի՝ համապատասխան վեցերորդ ամսվա ավարտը:

11.Խմբակցությունն իրավունք ունի փոխելու հանձնաժողովում ընդգրկված իր անդամին կամ իր կողմից նշանակված հանձնաժողովի նախագահին կամ նրա տեղակալին:

12. Էթիկայի հանձնաժողովի կազմը կամ կազմում փոփոխությունները հաստատվելուց հետո՝ հանձնաժողով ներկայացված դիմումների քննարկումը շարունակվում է:

13. Եթե Էթիկայի հանձնաժողովի ստեղծման մասին Ազգային ժողովի որոշումն ընդունվելուց հետո՝ մեկամսյա ժամկետում, հանձնաժողովի կազմը սույն հոդվածի 7-րդ մասով սահմանված կարգով չի հաստատվում, կամ սույն հոդվածի 5-րդ մասով, 6-րդ մասի 2-րդ կետով նախատեսված դեպքերում հանձնաժողովի նախագահի և նրա տեղակալի պաշտոնը մնում են թափուր, ապա այն համարվում է լուծարված:

Հոդված 19.3. Էթիկայի հանձնաժողովի անդամների ռոտացիան

1. Էթիկայի հանձնաժողովի գործունեության ժամկետի յուրաքանչյուր վեցերորդ ամսվա ավարտից հետո՝ խմբակցություններն իրավունք ունեն իրականացնելու իրենց կողմից նշանակված հանձնաժողովի անդամների ռոտացիա:

2. Ռոտացիոն կարգով էթիկայի հանձնաժողովի անդամին նշանակելու (վերանշանակելու) մասին իրավասու խմբակցության որոշումն Ազգային ժողովի նախագահին է ներկայացվում ոչ շուտ, քան հանձնաժողովի գործունեության ժամկետի յուրաքանչյուր վեցերորդ ամսվա ավարտին նախորդող տասներորդ օրը և ոչ ուշ, քան այդ ժամկետի ավարտից հինգ աշխատանքային օր առաջ:

3. Սույն մասով սահմանված կարգով նշանակված էթիկայի հանձնաժողովի նոր անդամներն իրենց պարտականությունների կատարումը ստանձնում են հանձնաժողովի նոր կազմը հաստատվելուց հետո, սակայն ոչ շուտ, քան հանձնաժողովի նախորդ անդամների լիազորությունների ավարտը:

Հոդված 19.4. էթիկայի հանձնաժողովի անդամի ինքնաբացարկը

1. Էթիկայի հանձնաժողովի անդամը չի կարող լինել գործով զեկուցող կամ մասնակցել հանձնաժողով ներկայացված դիմումի քննարկման վերաբերյալ հանձնաժողովի նիստերին և պարտավոր է հայտնել ինքնաբացարկ, եթե այդ դիմումը վերաբերում է իրեն կամ «Հանրային ծառայության մասին» օրենքի 29-րդ հոդվածի 11-րդ մասի իմաստով՝ իր հետ փոխկապակցված անձի:

2. Էթիկայի հանձնաժողովի նախագահի կամ նրա տեղակալի կողմից ինքնաբացարկ հայտնելու դեպքում նրանց լիազորություններն իրականացվում են Կանոնակարգի 19□7-րդ հոդվածի 2-4-րդ մասերով սահմանված կարգով, իսկ հանձնաժողովի անդամի կողմից ինքնաբացարկ հայտնելու դեպքում՝ նրա լիազորություններն իրականացնում է նրան փոխարինողը:

Հոդված 19. 5. էթիկայի հանձնաժողովի անդամի լիազորությունների դադարումը

1. Էթիկայի հանձնաժողովի անդամի լիազորությունները դադարում են, եթե՝

1) նրա պատգամավորական լիազորությունները դադարում կամ դադարեցվում են.

2) իրավասու խմբակցությունը նրա տեղում նշանակում է այլ անդամ.

3) նա դուրս է գալիս կամ հեռացվում է խմբակցությունից, եթե իրավասու խմբակցությունը նրա տեղում նշանակում է այլ անդամ:

Հոդված 19.6. էթիկային հանձնաժողովի լիազորությունները

1. Էթիկային հանձնաժողովը՝

1) սկսում է հանձնաժողով ներկայացված դիմումի քննարկումը կամ մերժում է այդ դիմումը;

2) քննարկում է պատգամավորի էթիկայի կանոնների խախտման վերաբերյալ դիմումը և խախտման առկայության դեպքում Ազգային ժողով ներկայացնում է եզրակացություն կամ եզրակացնում է խախտման բացակայության մասին;

3) քննարկում է պատգամավորի կողմից շահերի բախման իրավիճակի համար սահմանված պահանջը խախտելու վերաբերյալ դիմումը և խախտման առկայության դեպքում Ազգային ժողով ներկայացնում է եզրակացություն կամ եզրակացնում է խախտման բացակայության մասին.

4) քննարկում է շահերի բախման իրավիճակի համար սահմանված պահանջների կատարումն ապահովելու անհրաժեշտության վերաբերյալ պատգամավորի դիմումը և նրան ներկայացնում է առաջարկներ այդ պահանջների ապահովմանն ուղղված միջոցներ ձեռնարկելու վերաբերյալ;

5) պատգամավորական էթիկայի կանոնների, ինչպես նաև շահերի բախման իրավիճակի համար սահմանված պահանջի խախտման վերաբերյալ դիմումների քննարկման արդյունքում կարող է Ազգային ժողովի նախագահին առաջարկել դիմումում նշված պատգամավորի նկատմամբ կիրառելու կարգապահական միջոց;

6) կարող է հարցմամբ դիմել պետական և տեղական ինքնակառավարման մարմիններին, պաշտոնատար անձանց՝ հանձնաժողով ներկայացված դիմումի քննարկման համար նշանակություն ունեցող տեղեկություններ, անհրաժեշտ նյութեր և փաստաթղթեր ստանալու նպատակով;

7) կարող է հանձնաժողովում քննարկվող հարցի փաստական հանգամանքների ուսումնասիրման համար պատվիրել փորձաքննություններ և ստանալ դրանց արդյունքում կազմված եզրակացությունները:

2. Էթիկայի հանձնաժողովի պահանջած նյութերը, փաստաթղթերը կամ այլ տեղեկությունները պետք է նրան ուղարկվեն հարցումը ստանալուց հետո՝ երկշաբաթյա ժամկետում, եթե հարցման մեջ ավելի երկար ժամկետ նշված չէ, կամ հարցման հասցեատերը հանձնաժողովի պահանջը կատարելու համար այլ ողջամիտ ժամկետ չի առաջարկում:

3. Պետական, առևտրային կամ օրենքով պահպանվող այլ գաղտնիք պարունակող տեղեկությունները Էթիկայի հանձնաժողովին են տրամադրվում օրենքով սահմանված կարգով:

4. Էթիկայի հանձնաժողովի անդամները հարցմամբ պահանջվող տեղեկություններին առնչվող նյութերին կամ փաստաթղթերին կարող են ծանոթանալ նաև դրանց գտնվելու վայրում:

Հոդված 19. 7. Էթիկայի հանձնաժողովի նախագահի լիազորությունները

1. Էթիկայի հանձնաժողովի նախագահն ունի մշտական հանձնաժողովի նախագահի՝ Կանոնակարգի 13-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին, 2-րդ, 4-րդ, 6-8-րդ և 10-րդ կետերով սահմանված լիազորությունները, ինչպես նաև՝

1) կարող է հանձնաժողովի իրավասությանը վերապահված հարցի վերաբերյալ կարծիքներ ստանալու նպատակով այն ուղարկել գիտական, ուսումնական հաստատություններ, ինչպես նաև հանձնաժողովի նիստերին հրավիրել մասնագետներ

2) Աշխատակարգով սահմանված կարգով հաշվառում է հանձնաժողովի նիստերից հանձնաժողովի անդամների բացակայությունները:

2. Էթիկայի հանձնաժողովի նախագահի բացակայության կամ պաշտոնը թափուր լինելու դեպքում նրան փոխարինում է նրա տեղակալը, իսկ դրա անհնարինության դեպքում՝ հանձնաժողովի կողմից որոշված անդամը, բացառությամբ սույն հոդվածի 3-րդ և 4-րդ մասերով նախատեսված դեպքերի:

3. Եթե Էթիկայի հանձնաժողով ներկայացված դիմումը վերաբերվում է կառավարող խմբակցության պատգամավորին կամ դիմողը կառավարող խմբակցության պատգամավոր է, իսկ՝

1) հանձնաժողովի նախագահը կառավարող խմբակցության անդամ է, ապա այդ դիմումի քննարկման առնչությամբ՝ նրա լիազորություններն իրականացնում է նրա տեղակալը, իսկ դրա անհնարինության դեպքում՝ հանձնաժողովի կողմից որոշված անդամը, որը չի կարող լինել կառավարող խմբակցության անդամ

2) հանձնաժողովի նախագահի տեղակալը կառավարող խմբակցության անդամ է, ապա այդ դիմումի քննարկման ընթացքում հանձնաժողովի նախագահի բացակայության կամ պաշտոնը թափուր լինելու դեպքում նրան փոխարինում է հանձնաժողովի կողմից որոշված անդամը, որը չի կարող լինել կառավարող խմբակցության անդամ:

4. Եթե Էթիկայի հանձնաժողով ներկայացված դիմումը վերաբերվում է ընդդիմադիր խմբակցության պատգամավորին կամ դիմողը ընդդիմադիր խմբակցության պատգամավոր է, իսկ՝

1) հանձնաժողովի նախագահը ընդդիմադիր խմբակցության անդամ է, ապա այդ դիմումի քննարկման առնչությամբ՝ նրա լիազորություններն իրականացնում է նրա տեղակալը, իսկ դրա անհնարինության դեպքում՝ հանձնաժողովի կողմից որոշված անդամը, որը չի կարող լինել ընդդիմադիր խմբակցության անդամ

2) հանձնաժողովի նախագահի տեղակալը ընդդիմադիր խմբակցության անդամ է, ապա այդ դիմումի քննարկման ընթացքում հանձնաժողովի նախագահի բացակայության կամ պաշտոնը թափուր լինելու դեպքում նրան փոխարինում է հանձնաժողովի կողմից որոշված անդամը, որը չի կարող լինել ընդդիմադիր խմբակցության անդամ:

Հոդված 19. 8. Էթիկայի հանձնաժողովի նիստերը

1. Էթիկայի հանձնաժողովի նիստերն անցկացվում են մշտական հանձնաժողովների համար Կանոնակարգի 14-րդ և 15-րդ հոդվածով սահմանված կարգին համապատասխան՝ հաշվի առնելով Կանոնակարգի սույն գլխով սահմանված առանձնահատկությունները:

2. Էթիկայի հանձնաժողովի նիստերը հրավիրում է հանձնաժողովի նախագահը՝ իր կամ գործով զեկուցողի նախաձեռնությամբ: Հանձնաժողովի նիստն անցկացվում է նախաձեռնողի սահմանած օրակարգով և ժամկետում:

3. Էթիկայի հանձնաժողովի նիստն իրավազոր է, եթե նիստին ներկա է (գրանցվել է) հանձնաժողովի անդամների ընդհանուր թվի կեսից ավելին, և նիստը նախագահում է հանձնաժողովի նախագահը, իսկ դրա անհնարինության, ինչպես նաև Կանոնակարգի 19□7-րդ հոդվածի 2-4-րդ մասերով նախատեսված դեպքերում՝ նրա տեղակալը կամ հանձնաժողովի որոշած հանձնաժողովի անդամը:

4. Էթիկայի հանձնաժողովի եզրակացության կամ որոշման ընդունման վերաբերյալ առաջարկ ներկայացնելու իրավունք ունեն միայն հանձնաժողովի անդամները:

5. Էթիկայի հանձնաժողովի նիստում զեկուցողներին հարցեր տալու, ինչպես նաև նիստի վարման կարգի վերաբերյալ ելույթի իրավունք ունեն միայն հանձնաժողովի անդամները: Հանձնաժողովի նիստում ներկա լինելու իրավունք ունեցող այլ անձինք կարող են ելույթ ունենալ Կանոնակարգի 19□11-րդ հոդվածի 3-րդ մասով նախատեսված դեպքերում, նիստը նախագահողի թույլտվությամբ կամ հանձնաժողովի որոշմամբ:

6. Էթիկայի հանձնաժողովի նիստերը փակ են, բացառությամբ այն դեպքերի, երբ Կանոնակարգի 19□9-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին կետով նախատեսված դիմումում նշված պատգամավորը, կամ Կանոնակարգի 19□9-րդ հոդվածի 1-ին մասի 2-րդ կետում նշված դիմումի հեղինակն առաջարկում է հանձնաժողովի նիստերն անցկացնել հրապարակային:

7. Հանձնաժողովի փակ նիստում նրա անդամներից և բարտուղարության մասնագետներից բացի, կարող են ներկա լինել միայն նրա որոշմամբ կամ նախագահի կողմից հրավիրված անձինք: Հանձնաժողովի հրապարակային նիստում կարող են ներկա լինել Կանոնակարգի 14-րդ հոդվածի 5-րդ և 7-րդ մասով նախատեսված անձինք:

8. Էթիկայի հանձնաժողովի ընթացակարգային որոշումները պետք է լինեն գրավոր, իսկ եզրակացությունները, ինչպես նաև դիմումի մերժման վերաբերյալ որոշումը՝ նաև պատճառաբանված, բացառությամբ՝ Կանոնակարգի 19□11-րդ հոդվածի 8-րդ մասով նախատեսված դեպքերի:

9. Էթիկայի հանձնաժողովի որոշումներն ընդունվում են հանձնաժողովի անդամների ընդհանուր թվի ձայների մեծամասնությամբ:

10. Էթիկայի հանձնաժողովը հանձնաժողովն ունի իր աշխատակարգը, որը, Խորհրդի սահմանած օրինակելի աշխատակարգին համապատասխան, հաստատվում է հանձնաժողովի որոշմամբ:

Հոդված 19. 9. Էթիկայի հանձնաժողով դիմելը, դիմումի քննարկումը սկսելը և դիմումի մերժելը

1. Էթիկայի հանձնաժողով կարող է դիմել՝

1) յուրաքանչյուր ոք՝ պատգամավորի կողմից պատգամավորական էթիկայի կանոնները կամ շահերի բախման իրավիճակի համար սահմանված պահաջները խախտելու վերաբերյալ.

2) պատգամավորը՝ իր կողմից նշած հարցով շահերի բախման իրավիճակի համար սահմանված պահանջի կատարումն ապահովելու անհրաժեշտության վերաբերյալ:

2. Դիմումը ներկայացվում է գրավոր և պետք է պարունակի՝

1) դիմողի անունը, ազգանունը, իրավաբանական անձի դեպքում՝ նրա լրիվ անվանումը.

2) դիմողի հասցեն (պատգամավորի դեպքում չի ներկայացվում), իրավաբանական անձի դեպքում՝ գտնվելու վայրը□

3) սույն հոդվածի 1-ին մասի 1-ին կետով նախատեսված դեպքում՝ այն պատգամավորի անունը, ազգանունը, որին վերաբերում է դիմումը.

4) սույն հոդվածի 1-ին մասի 1-ին կետով նախատեսված դեպքում՝ օրենքի պահանջների խախտումը հավաստող, ինչպես նաև հարցի պարզաբանման կամ լուծման համար անհրաժեշտ այլ փաստաթղթեր.

5) դիմումը կազմելու տարին, ամիսը և ամսաթիվը.

6) դիմողի, իսկ իրավաբանական անձի դեպքում՝ նրա իրավասու պաշտոնատար անձի ստորագրությունը:

3. Եթե դիմումը ներկայացվում է ներկայացուցչի միջոցով, ապա պետք է ներկայացվի նաև օրենքով սահմանված կարգով տրված լիազորագիր:

4. Եթե դիմումում առկա են ձևական սխալներ, որոնք կարող են շտկվել, ապա Էթիկայի հանձնաժողովի համակարգող փորձագետը դրանք մատնացույց է անում դիմողին՝ նրան հնարավորություն ընձեռելով շտկելու այդ սխալները, կամ ինքն է շտկում դրանք՝ նախապես կամ հետագայում դիմողին իրազեկելով այդ մասին: Եթե դիմումին կից ներկայացված փաստաթղթերի ցանկն ամբողջական չէ, ապա

հանձնաժողովի համակարգող փորձագետն առաջարկում է մինչև սույն հոդվածի 5-րդ մասով սահմանված ժամկետի ավարտը համալրել այդ ցանկը:

5. Էթիկայի հանձնաժողովի նախագահի առաջարկությամբ, սակայն ոչ ուշ, քան դիմումը ստանալուց հետո՝ երկշաբաթյա ժամկետում, հանձնաժողովն իր որոշմամբ սկսում է դիմումի քննարկումը կամ մերժում է դիմումը:

6. Եթե Էթիկայի հանձնաժողովն ընդունում է դիմումի քննարկումը սկսելու մասին որոշում, ապա դիմումը ուսումնասիրելու և դրա արդյունքները հանձնաժողով ներկայացնելու համար հանձնաժողովի կազմից նշանակում է գործով զեկուցող: Եթե դիմումը վերաբերում է կառավարող խմբակցության պատգամավորի, ապա գործով զեկուցողը պետք է լինի ընդդիմադիր, իսկ ընդդիմադիր խմբակցության պատգամավորին վերաբերվող դիմումի դեպքում՝ կառավարող խմբակցությունից:

7. Էթիկայի հանձնաժողովը մերժում է դիմումը, եթե՝

1) դիմումում առաջադրված հարցերը ենթակա չեն Էթիկայի հանձնաժողովի քննարկմանը.

2) դիմողն իրավասու չէ դիմումում առաջադրված հարցով դիմելու Էթիկայի հանձնաժողով.

3) նույն պատգամավորի և նույն հիմքով ներկայացված դիմումի վերաբերյալ առկա է Էթիկայի հանձնաժողովի որոշում կամ եզրակացություն.

4) նույն պատգամավորի և նույն հիմքով խախտման համար Կանոնակարգի 52-րդ 2-րդ մասով սահմանված կարգով կիրառվել է կարգապահական միջոց

5) դիմումի առարկայի վերաբերյալ այլ դիմումի հիման վրա Էթիկայի հանձնաժողովում իրականացվում է քննարկում:

8. Եթե Էթիկայի հանձնաժողովն ընդունում է դիմումը մերժելու մասին որոշում, ապա հանձնաժողովի նախագահը դիմումը և դրան կից փաստաթղթերը, մերժման մասին հանձնաժողովի որոշման կայացման օրվանից հետո՝ երեք աշխատանքային օրվա ընթացքում, վերադարձնում է դիմողին:

Հոդված 19. 10. Էթիկայի հանձնաժողովում դիմումի քննարկման ընթացքը

1. Դիմումի քննարկումն իրականացվում է Էթիկայի հանձնաժողովի առնվազն մեկ նիստում:

2. Դիմումի քննարկումը սկսելու վերաբերյալ Էթիկայի հանձնաժողովի որոշման կայացման օրվանից հետո՝ երկշաբաթյա ժամկետում, սակայն ոչ ուշ, քան հանձնաժողովի նիստում դիմումի քննարկումից երեք աշխատանքային օր առաջ, գործով զեկուցողը հանձնաժողովի անդամներին, դիմողին, Կանոնակարգի 19□9-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին կետով նախատեսված դեպքում՝ դիմումում նշված պատգամավորին, ինչպես նաև դիմումի քննարկմանը ներգրավված այլ անձանց և մարմիններին ծանուցում է հանձնաժողովի նիստի (նիստերի), ինչպես նաև դիմումի քննարկման համար անհրաժեշտ այլ միջոցառումների անցկացման տեղի, օրվա, ժամի և այլ պայմանների մասին:

3. Մինչև դիմումի վերաբերյալ վերջնական եզրակացության ընդունումը դիմումի բովանդակությունը հրապարակման ենթակա չէ, բացառությամբ Կանոնակարգի 19□8-րդ հոդվածի 6-րդ մասով նախատեսված դեպքերի:

4. Էթիկայի հանձնաժողովի անդամները և հանձնաժողովի աշխատանքներին մասնացող այլ անձինք իրավունք չունեն դիմումի քննարկման կամ ուսումնասիրման ընթացքում իրենց հայտնի դարձած դիմողի կամ այլ անձանց մասին տվյալներ հրապարակելու՝ առանց նրանց գրավոր համաձայնության:

5. Էթիկայի հանձնաժողովը դիմումի քննարկումն ավարտում է դրա քննարկումը սկսելու վերաբերյալ իր որոշման կայացման օրվանից հետո՝ մեկամսյա ժամկետում, որը կարող է գործով զեկուցողի առաջարկությամբ՝ հանձնաժողովի որոշմամբ երկարաձգվել մինչև մեկ ամսով, եթե դիմումի քննարկման համար էական համարվող հանգամանքներ պարզելու նպատակով անհրաժեշտություն է առաջացել լրացուցիչ տեղեկություններ կամ փաստաթղթեր ձեռք բերել և դիմումի քննարկման մնացած ժամկետում հնարավոր չէ ըստ էության եզրակացություն ընդունել: Դիմումի քննարկման նոր ժամկետի մասին գործով զեկուցողը ծանուցում է շահագրգիռ կողմերին:

6. Եթե Էթիկայի հանձնաժողովը սույն հոդվածի 5-րդ մասով սահմանված ժամկետներում չի ավարտում դիմումի քննարկումը, ապա Կանոնակարգի 19□9-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին կետով նախատեսված դիմումը համարվում է մերժված, իսկ Կանոնակարգի 19□9-րդ հոդվածի 1-ին մասի 2-րդ կետով նախատեսված դիմումի քննարկումը համարվում է ավարտված:

7. Էթիկայի հանձնաժողովը պարտավոր է կասեցնել դիմումի քննարկումը, եթե՝

1) անհնարին է տվյալ դիմումի վերաբերյալ հանձնաժողովի որոշման կամ եզրակացության ընդունումը մինչև սահմանադրական, վարչական, քաղաքացիական կամ քրեական դատավարության կարգով քննվող գործով որոշում կամ դատական ակտ կայացնելը.

2) հանձնաժողովի ուսումնասիրության ընթացքում ի հայտ են գալիս առերևույթ հանցագործության հատկանիշներ: Այդ դեպքում հանձնաժողովի նախագահը 24

ժամվա ընթացքում դիմումին առնչվող բոլոր նյութերն ուղարկում է գլխավոր դատախազին□

3) հանձնաժողովի ուսումնասիրության ընթացքում ի հայտ են գալիս փաստեր, որոնք պարունակում են պատգամավորի կողմից Սահմանադրության 95-րդ հոդվածով սահմանված պահանջների կամ «Հանրային ծառայության մասին» օրենքով սահմանված նվերներ ընդունելու սահմանափակումների խախտման առերևույթ հատկանիշներ: Այդ դեպքում հանձնաժողովի նախագահը 24 ժամվա ընթացքում դիմումին առնչվող բոլոր նյութերն ուղարկում է Կոռուպցիայի կանխարգելման հանձնաժողովին:

8. Էթիկայի հանձնաժողովը կարող է կասեցնել դիմումի քննարկումը, եթե դիմումում նշված պատգամավորը հարգելի պատճառներով բացակայում է, և հանձնաժողովը նախքան եզրակացություն ընդունելը անհրաժեշտ է համարում նրա ներկայությունը՝ դիմումի քննարկմանն առնչվող որոշ կարևոր հանգամանքներ նրանից պարզելու համար:

9. Դիմումի քննարկումը վերսկսվում է դրա կասեցումն առաջացրած հանգամանքները վերանալուց հետո՝ մեկ շաբաթվա ընթացքում:

10. Դիմումի քննարկումը կարճվում է, եթե Ազգային ժողովի լիազորություններն ավարտվել են, դիմումում նշված պատգամավորի լիազորությունները դադարել կամ դադարեցվել են կամ օրենքով նախատեսված այլ հիմքով Էթիկայի հանձնաժողովի եզրակացության ընդունման անհրաժեշտությունը վերանում է:

11. Էթիկայի հանձնաժողովի նախագահը դիմումի քննարկումը կարճելու, կասեցնելու և վերսկսելու վերաբերյալ հանձնաժողովի որոշումները երեք աշխատանքային օրվա ընթացքում ուղարկում է շահագրգիռ կողմերին:

Հոդված 19□11□ Դիմումի քննարկման արդյունքում Էթիկայի հանձնաժողովի եզրակցությունները և որոշումները

1. Կանոնակարգի 19□9-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին կետով նախատեսված դիմումի քննարկման արդյունքում Էթիկայի հանձնաժողովը կարող է ընդունել պատգամավորի կողմից պատգամավորական էթիկայի կանոնների կամ շահերի բախմանն իրավիճակի համար սահմանված պահանջների խախտման առկայության կամ բացակայության վերաբերյալ եզրկացություն, ինչպես նաև խախտումը թույլ տված պատգամավորին կարգապահական պատասխանատվության ենթարկելու վերաբերյալ Ազգային ժողովի նախագահին առաջարկ ներկայացնելու վերաբերյալ որոշում:

2. Կանոնակարգի 19□9-րդ հոդվածի 1-ին մասի 2-րդ կետով նախատեսված դիմումի քննարկման արդյունքում Էթիկայի հանձնաժողովը կարող է ընդունել դրանում նշած հարցով շահերի բախման իրավիճակի համար սահմանված պահանջը կատարելու կամ այդ իրավիճակի լուծմանն ուղղված այլ միջոցներ

ձեռնարկելու անհրաժեշտության վերաբերյալ դիմողին առաջարկ ներկայացնելու մասին որոշում:

3. Սույն հոդվածի 1-ին և 2-րդ մասերով նախատեսված եզրակացության և որոշման նախագծերը կազմում և Էթիկայի հանձնաժողովի քննարկմանն է ներկայացնում գործով զեկուցողը: Հանձնաժողովի նիստում դիմումի քննարկումից մեկ շաբաթ առաջ, գործով զեկուցողն այդ նախագծերն ուղարկում է հանձնաժողովի բոլոր անդամներին: Նախագծերն ստանալուց հետո՝ մեկշաբաթյա ժամկետում, հանձնաժողովի անդամները իրավունք ունեն գործով զեկուցողին ներկայացնելու դրանց վերաբերյալ գրավոր առաջարկներ:

4. Էթիկայի հանձնաժողովը պարտավոր է հնարավորություն տալ Կանոնակարգի 19□9-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին կետով նախատեսված դիմումում նշված պատգամավորին պարզաբանումներ տալ դիմումի և դրա ուսումնասիրության արդյունքների վերաբերյալ, ինչպես նաև հիմնավորել իր դիրքորոշումն ամբողջությամբ: Եթե դիմումում նշված պատգամավորը հրաժարվում է մասնակցել դիմումի քննարկմանը, ապա Էթիկայի հանձնաժողովի նիստում դիմումի վերաբերյալ եզրակացության նախագծի քննարկման օրվանից առնվազն մեկ շաբաթ առաջ գործով զեկուցողը եզրակացության նախագիծը և հարցին առնչվող նյութերն ուղարկում է պատգամավորին, որն իրավունք ունի դրանք ստանալուց հետո՝ մեկ շաբաթվա ընթացքում, եթե Էթիկայի հանձնաժողովի որոշմամբ այլ ժամկետ սահմանված չէ, հանձնաժողով ուղարկելու դրանց վերաբերյալ իր գրավոր դիրքորոշումն ու պարզաբանումները:

5. Էթիկայի հանձնաժողովի նիստում եզրակացության և որոշման նախագծերի քննարկման ընթացքում՝

1) հիմնական զեկուցմամբ հանդես է գալիս գործով զեկուցողը□

2) Կանոնակարգի 19□9-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին կետով նախատեսված դիմումի դեպքում հարակից զեկուցմամբ կարող է հանդես է գալ դիմումում նշված պատգամավորը, իսկ Կանոնակարգի 19□9-րդ հոդվածի 1-ին մասի 2-րդ կետով նախատեսված դիմումի դեպքում՝ հարակից զեկուցում չի լինում□

3) Կանոնակարգի 19□9-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին կետով նախատեսված դիմումի հեղինակը, ինչպես նաև հանձնաժողով նյութեր, փաստաթղթեր կամ տեղեկություններ ներկայացրած անձինք և պատգամավորի ներկայացուցիչը իրավունք ունեն ելույթ ունենալու, պատասխանելու հանձնաժողովի անդամների և դիմումում նշված պատգամավորի հարցերին□

4) գործով զեկուցողը կարող է իր զեկուցման ընթացքում կամ եզրափակիչ ելույթում նախագծի վերաբերյալ առաջարկներ ներկայացնել, ինչպես նաև հայտնել սահմանված կարգով ներկայացված մյուս առաջարկների վերաբերյալ իր դիրքորոշումը.

5) Կանոնակարգի 19□9-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին կետով նախատեսված դիմումում նշված պատգամավորը իրավունք ունի հարցեր տալու զեկուցողին.

6) հանձնաժողովի անդամները կարող են իրենց ելույթում եզրակացության և որոշման նախագծերի վերաբերյալ առաջարկներ ներկայացնել.

7) գործով զեկուցողին գրավոր առաջարկներ ներկայացրած հանձնաժողովի անդամներն իրավունք ունեն ելույթ ունենալու և պատասխանելու հարցերին.

8) հանձնաժողովի անդամները, ինչպես նաև Կանոնակարգի 19□9-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին կետով նախատեսված դիմումում նշված պատգամավորը իրավունք ունեն ելույթից հետո հարցեր տալու առաջարկների հեղինակներին:

6. Հիմնական զեկուցողի եզրափակիչ ելույթից հետո՝ քվեարկության են դրվում սույն հոդվածի 3-րդ մասով և 5-րդ մասի 6-րդ կետով սահմանված կարգով ներկայացված բոլոր առաջարկները:

7. Առաջարկների քվեարկությունից հետո՝ սույն հոդվածի 1-ին մասով նախատեսված նախագծերն առանձին-առանձին, ինչպես նաև սույն հոդվածի 2-րդ մասով նախատեսված նախագիծը դրվում են քվեարկության՝ հանձնաժողովի ընդունած բոլոր առաջարկների հիման վրա կատարված ուղղումներով:

8. Եթե Էթիկայի հանձնաժողովի եզրակացության կամ սույն հոդվածի 2-րդ մասով նախատեսված որոշման նախագիծը քվեարկության արդյունքում չի ստանում ընդունման համար անհրաժեշտ թվով ձայներ, ապա Կանոնակարգի 19□9-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին կետով նախատեսված դիմումը համարվում է մերժված, իսկ Կանոնակարգի 19□9-րդ հոդվածի 1-ին մասի 2-րդ կետով նախատեսված դիմումի քննարկումը համարվում է ավարտված:

9. Եթե Էթիկայի հանձնաժողովն ընդունում է՝

1) պատգամավորի կողմից պատգամավորական էթիկայի կանոնների կամ շահերի բախմանն իրավիճակի համար սահմանված պահանջների խախտման առկայության վերաբերյալ եզրակացություն և պատգամավորին կարգապահական պատասխանատվության ենթարկելու վերաբերյալ Ազգային ժողովի նախագահին առաջարկ ներկայացնելու վերաբերյալ որոշում կամ ընդունում է միայն եզրակացություն, ապա Էթիկայի հանձնաժողովի նախագահը եզրակացությունը, իսկ ընդունվելու դեպքում՝ նաև որոշումը, երեք աշխատանքային օրվա ընթացքում ներկայացնում է Ազգային ժողովի նախագահին: Եզրակացությանը կցվում են դրանում նշված փաստերը և եզրահանգումները հիմնավորող փաստաթղթեր կամ այլ նյութեր, ինչպես նաև դիմումում նշված պատգամավորի ներկայացրած գրավոր դիրքորոշումներն ու պարզաբանումները□

2) պատգամավորի կողմից պատգամավորական էթիկայի կանոնների կամ շահերի բախմանն իրավիճակի համար սահմանված պահանջների խախտման բացակայության վերաբերյալ եզրակացություն, ապա այն մեկ աշխատանքային օրվա ընթացքում տեղադրվում է Ազգային ժողովի պաշտոնական ինտերնետային կայքում:

10. Եթե Էթիկայի հանձնաժողովը ընդունում է 19□9-րդ հոդվածի 1-ին մասի 2-րդ կետով նախատեսված դիմումում նշված հարցով շահերի բախման իրավիճակի համար սահմանված պահանջների կատարումն ապահովելու անհրաժեշտության

վերաբերյալ որոշում, ապա այն մեկ աշխատանքային օրվա ընթացքում տեղադրվում է Ազգային ժողովի պաշտոնական ինտերնետային կայքում:

11. Սույն հոդվածի 9-րդ մասի 1-ին կետում նշված եզրակացությունն Ազգային ժողովի նախագահին ներկայացվելուց հետո՝ մեկ ամսվա ընթացքում, այն Էթիկայի հանձնաժողովի նախագահի կողմից հրապարակվում է Ազգային ժողովի հերթական նիստում: Ազգային ժողովի նիստում Էթիկայի հանձնաժողովի եզրակացության հարապարակման համար հանձնաժողովի նախագահին հատկացվում է մինչև քսան րոպե, որից անմիջապես հետո՝ մինչև հինգ րոպե տևողությամբ ելույթով կարող է հանդես գալ Ազգային ժողովի նախագահը և հրապարակել պատգամավորի նկատմամբ կիրառվող կարգապահական միջոցը:

Հոդված 19□12□ Էթիկայի հանձնաժողովի եզրակացության հիման վրա պատգամավորի նկատմամբ կիրառվող կարգապահական միջոցները

1. Պատգամավորի կողմից պատգամավորական էթիկայի կանոնների կամ շահերի բախմանն իրավիճակի համար սահմանված պահանջների խախտման առկայության վերաբերյալ Էթիկայի հանձնաժողովի եզրակացության և որոշման հիման վրա պատգամավորի նկատմամբ կարող են կիրառվել հետևյալ կարգապահական միջոցները.

1) Ազգային ժողովի նիստում Էթիկայի հանձնաժողովի եզրակացության հրապարակմանը հաջորդող՝ մեկ նիստում խոսափողից հանդես գալու իրավունքից զրկում, եթե խախտումը կատարվել է Ազգային ժողովի նիստի ընթացքում.

2) հեռացում՝ մինչև Ազգային ժողովի նիստում Էթիկայի հանձնաժողովի եզրակացության հրապարակման օրվա ավարտը կայանալիք նիստերից՝ զրկելով այդ ընթացքում դահլիճում ներկա լինելու իրավունքից, եթե խախտումը կատարվել է Ազգային ժողովի նիստի ընթացքում.

3) Ազգային ժողովի նիստերի օրերին Ազգային ժողովի նիստերի դահլիճում ներկա լինելու իրավունքից մինչև յոթ օրով զրկում, եթե խախտումը կատարվել է Ազգային ժողովի նիստի ընթացքում:

2. Սույն հոդվածի 1-ին մասի 2-րդ կամ 3-րդ մասով սահմանված կարգապահական միջոցի կիրառման դեպքում պատգամավորն իրավունք ունի մասնակցելու Ազգային ժողովի նիստերի ընթացքում անցկացվող քվեարկություններին:

3. Նիստերի դահլիճից հիմնական զեկուցողի հեռացման դեպքում հարցի քննարկումը հետաձգվում է կարգապահական միջոցի կիրառման ժամկետով: Հարցի քննարկումը վերսկսվում է պատգամավորի մասնակցությունն Ազգային ժողովի նիստին ժամկետից շուտ վերականգնվելու դեպքում:

4. Խմբակցության հիմնավորված միջնորդությամբ Խորհուրդն իրավունք ունի մինչև սույն հոդվածի 1-ին մասի 3-րդ կետում նշված կարգապահական միջոցի

կիրառման ժամկետի լրանալը վերականգնելու հեռացված պատգամավորի մասնակցությունն Ազգային ժողովի նիստին:

5. Նիստից հեռացման պահանջին չենթարկվելու դեպքում նախագահողը հանձնարարում է Ազգային ժողովի անվտանգությունն ապահովող ծառայությանը իրականացնել պահանջը

Հոդված 19.13. Էթիկայի հանձնաժողովի լիազորությունների ավարտը

1. Էթիկայի հանձնաժողովի լիազորություններն ավարտվում են նրա գործունեության ժամկետն ավարտվելու կամ լուծարվելու դեպքում:

2. Էթիկայի հանձնաժողովը կարող է լուծարվել Ազգային ժողովի որոշմամբ, որի նախագիծը ներկայացնելու իրավունք ունի խմբակցությունը:

Հոդված 28. Խորհրդի լիազորությունները

1. Խորհուրդը՝

1) հաստատում է Ազգային ժողովի հերթական նստաշրջանների և նիստերի օրակարգերի նախագծերը.

2) սահմանում է Ազգային ժողովի հերթական նիստերի օրակարգային հարցերի քննարկման հաջորդականությունը.

3) սահմանում է մշտական և առանձին նախագծի հարցով ժամանակավոր հանձնաժողովների հերթական նիստերի գումարման օրերի ժամկետացանկը.

4) կարող է ընդունել Ազգային ժողովի հերթական նիստում հարցի քննարկման տևողությունը մեկից մինչև վեց ժամ սահմանելու մասին որոշում.

5) կարող է Ազգային ժողովի քննարկմանը ներկայացնել հերթական նիստերի ընթացքում լրացուցիչ նիստ անցկացնելու մասին Ազգային ժողովի որոշման նախագիծ.

6) Սահմանադրության 168-րդ հոդվածի 6-րդ կետով սահմանված դեպքում պատգամավորի լիազորությունները դադարեցնելու հարցով դիմում է Սահմանադրական դատարան.

7) սահմանում է Ազգային ժողովի հանձնաժողովների օրինակելի աշխատակարգերը.

8) հաստատում է Աշխատակազմի կառուցվածքը և կանոնադրությունը.

9) իրավասու մշտական հանձնաժողովի առաջարկությամբ հաստատում է Բյուջետային գրասենյակի աշխատակարգը, փորձագետների պաշտոնավարման պայմանների, ընտրության (նշանակման), ինչպես նաև Բյուջետային գրասենյակի փորձագետներին կարգապահական պատասխանատվության ենթարկելու կարգերը.

10) հաստատում է Ազգային ժողովում լրագրողների հավատարմագրման, ինչպես նաև Ազգային ժողովի նստավայրում մամուլի ասուլիսների, ճեպազրույցների անցկացման կարգերը.

11) հաստատում է Հայաստանի Հանրապետության Ազգային ժողովի պատվո մեդալի, Հայաստանի Հանրապետության Ազգային ժողովի պատվոգրի, Հայաստանի Հանրապետության Ազգային ժողովի նախագահի շնորհակալագրի, Հայաստանի Հանրապետության Ազգային ժողովի նախագահի հուշամեդալի, Հայաստանի Հանրապետության Ազգային ժողովի նախագահի հուշանվերի նկարագրությունը և պարգևատրման կարգը.

12) հաստատում է «Ազգային ժողովի պատգամավոր» կրծքանշանի նկարագրությունը.

13) հաստատում է մշտական հանձնաժողովներում և դրանց համատեղ նիստերում պետական բյուջեի նախագծի նախնական քննարկումների անցկացման, առաջարկների ներկայացման և Կառավարության կողմից փոփոխություններ կատարելու ժամկետացանկը.

14) հաստատում է մշտական հանձնաժողովներում բյուջեի տարեկան հաշվետվության նախնական քննարկումների անցկացման ժամկետացանկը.

15) համաձայնություն է տալիս միջխորհրդարանական համաձայնագիր ստորագրելու համար.

16) հաստատում է միջազգային խորհրդարանական կազմակերպություններում, միջխորհրդարանական հանձնաժողովներում Ազգային ժողովի պատվիրակությունների կազմերը, դրանց կազմավորման և գործունեության կարգերը.

17) ստեղծում և լուծարում է Ազգային ժողովի բարեկամական խմբեր, ինչպես նաև հաստատում է դրանց կազմերը և գործունեության կարգերը.

18) սահմանում է Կանոնակարգի 40-րդ հոդվածի 3-րդ մասի 3-րդ և 5-րդ կետերում նախատեսված նիստերի, ինչպես նաև «Խորհրդարանական շաբաթ» հեռուստահաղորդաշարի հեռարձակման համար մրցույթի պայմանները.

19) Կանոնակարգի 146-րդ հոդվածի 2.2-րդ մասով նախատեսված դեպքում նշանակում է ինքնավար մարմնի անդամի պաշտոնում թեկնածուների ընտրության համար ձևավորվող մրցութային խորհրդի անդամ:

20) Կանոնակարգի 8-րդ հոդվածի 1-ին մասի 9.3-րդ կետով նախատեսված դեպքում Ազգային ժողովի խմբակցությունները Մրցութային խորհրդի անդամի թեկնածու առաջադրելուց հետո՝ յոթնօրյա ժամկետում, նշանակում են Մրցութային խորհրդի անդամ՝ Ազգային ժողովի խմբակցությունների առաջադրած թեկնածուների կազմից:

Հոդված 33. Առաջին նստաշրջանի անցկացումը

1. Առաջին նստաշրջանի նիստերը բացում և մինչև Ազգային ժողովի նախագահի ընտրվելը նախագահում է տարիքով ավագ պատգամավորը:

2. Առաջին նստաշրջանի բացման առթիվ ողջույնի ելույթի իրավունք ունեն Հանրապետության նախագահը և Ամենայն Հայոց Կաթողիկոսը:

3. Ողջույնի ելույթներից հետո պատգամավորները երդվում են՝ «Հանուն համազգային նպատակների իրականացման և հայրենիքի հզորացման ու բարգավաճման՝ երդվում եմ բարեխղճորեն կատարել ժողովրդի առջև ունեցած պարտավորություններս, պահպանել Հայաստանի Հանրապետության Սահմանադրությունը և օրենքները, նպաստել Հայաստանի Հանրապետության ինքնիշխանության և շահերի պահպանմանը, անել ամեն ինչ քաղաքացիական համերաշխության, ազգային ու համամարդկային արժեքների պահպանման համար:»:

4. Նիստից բացակայող կամ Ազգային ժողովի կազմը հետագայում համալրած պատգամավորը երդվում է Ազգային ժողովի՝ իր մասնակցությամբ առաջին նիստում:

4.1. Երդվելուց հետո պատգամավորներն Ազգային ժողովի նիստում ստորագրում են երդման տեքստի տակ:

5. Պատգամավորների երդումից հետո նիստը նախագահողն Ազգային ժողով ընտրվելու մասին Կենտրոնական ընտրական հանձնաժողովի արձանագրության հիման վրա պաշտոնապես հայտարարում է Ազգային ժողովի պատգամավորների ընդհանուր թիվը, քաղաքական կոալիցիա կազմած կուսակցությունների (կուսակցությունների դաշինքների) անվանումները և ներկայացնում

պատգամավորներին՝ կարդալով յուրաքանչյուրի անունը, ազգանունը, կուսակցության (կուսակցությունների դաշինքի) անվանումը, որից հետո պատգամավորները գրանցվում են:

6. Նիստը նախագահողը հայտարարում է առաջին նստաշրջանի օրակարգը՝

1) հաշվիչ հանձնախմբի ստեղծում.

2) Ազգային ժողովի նախագահի ընտրություն.

3) Ազգային ժողովի նախագահի երեք տեղակալների ընտրություններ.

4) մշտական հանձնաժողովների ստեղծում.

4. 1) Էթիկայի հանձնաժողովի ստեղծում.

5) մշտական հանձնաժողովների նախագահների ընտրություններ.

5.1) Կառավարության առաջարկությամբ՝ Կառավարության կառուցվածքի փոփոխության վերաբերյալ օրենքի նախագծի քննարկում.

6) Կառավարության ծրագրին հավանություն տալու հարց:

7. Առաջին նստաշրջանի նիստերն անցկացվում են հերթական նիստերի համար՝ Կանոնակարգի 37-րդ հոդվածով սահմանված կարգով: Մինչև մշտական հանձնաժողովների նախագահների ընտրությունների հարցի քննարկումն ավարտվելը տեղի են ունենում ամենօրյա նիստեր:

8. Կառավարության ծրագիրն Ազգային ժողով ներկայացվելուց հետո՝ 24 ժամվա ընթացքում, Ազգային ժողովի նախագահը հայտարարում է հարցի քննարկմանը նվիրված նիստի օրը և ժամը:

9. Ազգային ժողովի նախագահն Ազգային ժողովի առաջին նստաշրջանի նիստում հանդես է գալիս խմբակցությունների և մշտական հանձնաժողովների, ինչպես նաև Խորհրդի կազմավորման վերաբերյալ հայտարարությամբ:

10. Առաջին նստաշրջանն ավարտվում է Ազգային ժողովի նախագահի եզրափակիչ ելույթով և հերթական նստաշրջանի գումարման օրվա մասին հայտարարությամբ:

Հոդված 38. Հերթական նստաշրջանի օրակարգը

1. Հերթական նստաշրջանի օրակարգում կարող են ընդգրկվել միայն Ազգային ժողովում շրջանառության մեջ դրված, այդ թվում՝ նախորդ հերթական նստաշրջանի օրակարգում ընդգրկված հարցերը:

2. Հերթական նստաշրջանի օրակարգի կամ դրանում լրացումներ կատարելու մասին նախագծում ընդգրկվում են հերթական նիստերի առաջին օրվա դրությամբ նստաշրջանի օրակարգում ընդգրկվելու ենթակա հետևյալ հարցերը.

1) պարտադիր քննարկման ենթակա հարցերը,

2) այն հարցերը, որոնց վերաբերյալ գլխադասային հանձնաժողովի եզրակացությունը ստացվել է, կամ եզրակացությունը ներկայացնելու ժամկետը լրացել է:

3. Պարտադիր քննարկման ենթակա հարցերն են՝

1) թափուր պաշտոնում ընտրության կամ նշանակման մասին հարցը.

2) Կառավարության ծրագրին հավանություն տալու մասին հարցը.

3) Կառավարության վստահության հարցը.

4) Կառավարության որոշմամբ անհետաձգելի համարվող օրենքի նախագիծը.

5) վարչապետին անվստահություն հայտնելու մասին հարցը.

6) Սահմանադրական դատարանի դատավորի լիազորությունները դադարեցնելու հարցով Սահմանադրական դատարան դիմելու մասին հարցը.

7) Կոռուպցիայի կանխարգելման հանձնաժողովի եզրակացության հիման վրա՝ Ազգային ժողովի կողմից ընտրված պաշտոնատար անձի լիազորությունները դադարեցնելու մասին հարցերը.

7.1) ինքնավար մարմնի եզրակացության հիման վրա՝ այդ ինքնավար մարմնի անդամի լիազորությունները դադարեցնելու մասին հարցը.

8) պատգամավորի նկատմամբ քրեական հետապնդում հարուցելուն կամ նրան ազատությունից զրկելուն համաձայնություն տալու մասին հարցը.

9) Մարդու իրավունքների պաշտպանի նկատմամբ քրեական հետապնդում հարուցելուն կամ նրան ազատությունից զրկելուն համաձայնություն տալու մասին հարցը.

10) խմբակցության հարցապնդման պատասխանը քննարկելու մասին հարցը.

11) ընդդիմադիր խմբակցության կողմից արտահերթ համարված հարցը.

12) խմբակցության կողմից առաջնահերթ համարված օրենքի նախագիծը.

13) Ազգային ժողովի քննիչ հանձնաժողովի անդամների թիվը սահմանելու մասին հարցը.

14) Ազգային ժողովի քննիչ հանձնաժողովի զեկույցը.

15) Ազգային ժողովի քննիչ հանձնաժողովի գործունեության ժամկետը երկարաձգելու մասին հարցը.

15. 1) Էթիկայի հանձնաժողովի ստեղծման մասին հարցը.

15. 2) Էթիկայի հանձնաժողովի եզրակացությունը.

16) ~~Ազգային ժողովի~~ առանձին նախագծի հարցով Ազգային ժողովի ժամանակավոր հանձնաժողովի գործունեության ժամկետը երկարաձգելու մասին հարցը.

17) Ազգային ժողովի նախագահի նախաձեռնությամբ ներկայացված հայտարարության կամ ուղերձի նախագիծը.

18) պետական մարմինների, պաշտոնատար անձանց զեկույցները, հաղորդումները և հաշվետվությունները.

18.1) Սահմանադրության փոփոխության կամ օրենքի նախագիծը երկրորդ ընթերցմամբ քննարկելու մասին հարցը.

18.2) Սահմանադրության փոփոխությունների նախագիծը հանրաքվեի դնելու մասին Ազգային ժողովի որոշումը, որի հիման վրա նշանակված հանրաքվեի անցկացումը «Հանրաքվեի մասին» սահմանադրական օրենքով սահմանված կարգով կասեցվել է, ուժը կորցրած ճանաչելու մասին հարցը.

19) օրենքով կամ Ազգային ժողովի որոշմամբ նախատեսված քննարկման ժամկետ ունեցող հարցերը:

4. Պարտադիր քննարկման ենթակա հարցերը հերթական նստաշրջանի և նիստերի օրակարգերի նախագծերում ընդգրկվում են միաժամանակ, բացառությամբ՝

1) սույն հոդվածի 3-րդ մասի 18-րդ կետում նշված հարցերի, որոնք հերթական նիստերի օրակարգի նախագծում ընդգրկվում են Ազգային ժողովի քննարկմանը ներկայացվելուց հետո՝ երկամսյա ժամկետում.

2) սույն հոդվածի 3-րդ մասի 18.1-ին կետում նշված հարցերի, որոնք հերթական նստաշրջանի օրակարգում ընդգրկվում են համապատասխան նախագծի առաջին ընթերցմամբ քննարկելու մասին հարցը հերթական նստաշրջանի օրակարգում ընդգրկվելու պահից, իսկ հերթական նիստերի օրակարգի նախագծում ընդգրկվում են Կանոնակարգի 39-րդ հոդվածի 2-րդ մասի 1-ին կետով սահմանված կարգով:

5. Հերթական նստաշրջանի օրակարգի կամ դրանում լրացումներ կատարելու մասին նախագիծը կազմված է հետևյալ բաժիններից.

1) առաջին բաժին, որտեղ ներառվում են նախորդ հերթական նստաշրջանի օրակարգում ընդգրկված, ինչպես նաև պարտադիր քննարկման ենթակա հարցերը.

2) երկրորդ բաժին, որտեղ ներառվում են այն հարցերը, որոնց վերաբերյալ գլխադասային հանձնաժողովը ներկայացրել է դրական եզրակացություն, բացառությամբ Կանոնակարգի 38-րդ հոդվածի 3-րդ մասի 18.1-ին կետում նշված հարցերի, ինչպես նաև Կանոնակարգի 78-րդ հոդվածի 6-րդ մասի 1-ին կետով սահմանված կարգով այլընտրանքային համարված նախագծերը.

3) երրորդ բաժին, որտեղ ներառվում են այն հարցերը, որոնց վերաբերյալ գլխադասային հանձնաժողովը բացասական եզրակացություն է ներկայացրել կամ Կանոնակարգով սահմանված ժամկետում եզրակացություն չի ներկայացրել, բացառությամբ Կանոնակարգի 38-րդ հոդվածի 3-րդ մասի 18.1-ին կետում նշված հարցերի:

6. Հերթական նստաշրջանի օրակարգի և դրանում լրացումներ կատարելու մասին նախագծերը մշակում և Ազգային ժողովի նախագահին է ներկայացնում Աշխատակազմը, որից հետո Ազգային ժողովի նախագահը նախագիծը ներկայացնում է Խորհրդի քննարկմանը:

7. Հերթական նստաշրջանի օրակարգի և դրանում լրացումներ կատարելու մասին նախագծերը Խորհրդի կողմից հաստատվելուց հետո ներկայացվում են Ազգային ժողովի քննարկմանը:

8. Հերթական նստաշրջանի օրակարգի կամ դրանում լրացումներ կատարելու մասին նախագիծն Ազգային ժողովի նիստում քննարկվում է հետևյալ կարգով.

1) հիմնական զեկուցմամբ հանդես է գալիս Ազգային ժողովի նախագահը, որից հետո նրան կարող են տրվել հարցեր.

2) հարակից զեկուցում չի լինում.

3) հեղինակների պահանջով անցկացվում են նախագծի երրորդ բաժնում ներառված այն հարցերի կարճատև քննարկումները, որոնց վերաբերյալ գլխադասային հանձնաժողովը ներկայացրել է բացասական եզրակացություն: Այդ դեպքում մինչև երեքական որպե տևողությամբ ելույթի իրավունք ունեն հեղինակը, ինչպես նաև գլխադասային հանձնաժողովի ներկայացուցիչը, որից անմիջապես հետո նախագիծն օրակարգում ընդգրկելու մասին հարցը դրվում է քվեարկության.

4) մինչև երեքական որպե տևողությամբ ելույթի իրավունք ունեն նախագծի երրորդ բաժնում ներառված այն հարցերի հեղինակները, որոնց վերաբերյալ գլխադասային հանձնաժողովը Կանոնակարգով սահմանված ժամկետում եզրակացություն չի ներկայացրել: Հեղինակի ելույթից անմիջապես հետո նախագիծն օրակարգում ընդգրկելու մասին հարցը դրվում է քվեարկության.

5) մտքերի փոխանակություն.

6) Ազգային ժողովի նախագահի եզրափակիչ ելույթից հետո նախագծի երրորդ բաժնի՝ սույն մասի 3-րդ և 4-րդ կետերում նշված հարցերից բացի, օրակարգում ընդգրկելու մասին մնացած հարցերն առանձին-առանձին դրվում են քվեարկության.

7) հարցի քննարկման ընդհանուր տևողությունն ավելացվում է սույն մասի 3-րդ և 4-րդ կետերով նախատեսված ելույթների համար անհրաժեշտ ժամանակով:

9. Հերթական նստաշրջանի օրակարգի կամ դրանում լրացումներ կատարելու մասին նախագծի առաջին և երկրորդ բաժիններում ներառված հարցերը հերթական նստաշրջանի օրակարգում ընդգրկվում են առանց քվեարկության:

10. Քվեարկության արդյունքում հերթական նստաշրջանի օրակարգում չընդգրկված հարցը շրջանառությունից հանվում է:

Հոդված 52. Ազգային ժողովի նիստը նախագահողի լիազորությունները

1. Նիստը նախագահողը՝

1) հայտարարում է նիստը կամ նստաշրջանը բացված, ինչպես նաև ավարտված.

2) հայտարարում է նիստի ընդմիջումները.

3) ապահովում է օրակարգային հարցերի քննարկման հաջորդականությունը և յուրաքանչյուր հարցի քննարկումն սկսվելուց առաջ տեղեկացնում է հաջորդող երեք հարցի մասին.

4) հարցի քննարկումն սկսվելուց առաջ տեղեկացնում է հարցի քննարկման կարգի և տևողության մասին.

5) ձայն է տալիս ելույթի, ինչպես նաև հարցի կամ դրան պատասխանելու համար.

6) հայտարարում է պատգամավորների գրանցումը, ելույթների և հարցերի համար հերթագրումը, քվեարկության անցկացումը, ինչպես նաև քվեարկության արդյունքները.

7) համակարգում է նիստն սպասարկող ծառայողների աշխատանքը.

8) նիստի բնականոն ընթացքը վերականգնելու նպատակով կարող է ընդմիջել ելույթները:

2. Նիստը նախագահողի օրինական պահանջը չկատարելու, քննարկվող հարցից ելույթում շեղվելու, վիրավորական արտահայտություն անելու, բացակա

պատգամավորի փոխարեն գրանցվելու կամ քվեարկելու, պատգամավորի քվեարկությանը խոչընդոտելու, Ազգային ժողովի նիստի բնականոն ընթացքը խոչընդոտելու կամ նիստի կարգը խախտող այլ գործողություն կատարելու դեպքում նախագահողն իրավունք ունի պատգամավորի նկատմամբ կիրառելու կարգապահական միջոցներ, իսկ նիստին ներկա գտնվող այլ անձին՝ նախազգուշացնելու կամ հեռացնելու նիստերի դահլիճից:

3. Պատգամավորի նկատմամբ կարող են կիրառվել հետևյալ կարգապահական միջոցները.

1) նախազգուշացում՝ անունը, ազգանունը հրապարակելով.

2) խոսափողի անջատում.

3) մեկ նիստում խոսափողից հանդես գալու իրավունքից զրկում.

4) հեռացում մինչև տվյալ օրվա ավարտը կայանալիք նիստերից՝ զրկելով այդ ընթացքում դահլիճում ներկա լինելու իրավունքից.

5) Ազգային ժողովի նիստերի օրերին Ազգային ժողովի նիստերի դահլիճում ներկա լինելու իրավունքից մինչև յոթ օրով զրկում:

4. Կարգապահական միջոցը, որպես կանոն, պետք է կիրառվի մեղմից դեպի խիստը, համաչափ լինի արարքի ծանրությանը և նպատակ հետապնդի ապահովելու նիստի բնականոն ընթացքը: Սույն հոդվածի 3-րդ մասի 5-րդ կետով սահմանված կարգապահական միջոցը կարող է կիրառվել, եթե մինչ այդ պատգամավորի նկատմամբ կիրառվել է սույն հոդվածի 3-րդ մասի 4-րդ կետով սահմանված կարգապահական միջոցը, և պատգամավորն ինքնակամ դա չի կատարել:

4.1. Սույն հոդվածի 3-րդ մասի 4-րդ կամ 5-րդ մասով սահմանված կարգապահական միջոցի կիրառման դեպքում պատգամավորն իրավունք ունի մասնակցելու Ազգային ժողովի նիստերի ընթացքում անցկացվող քվեարկություններին:

5. Նիստերի դահլիճից հիմնական զեկուցողի հեռացման դեպքում հարցի քննարկումը հետաձգվում է կարգապահական միջոցի կիրառման ժամկետով: Եթե նիստից հեռացված զեկուցողը պատգամավոր է, ապա հարցի քննարկումը վերսկսվում է նրա մասնակցությունն Ազգային ժողովի նիստին ժամկետից շուտ վերականգնվելու դեպքում:

6. Խմբակցության հիմնավորված միջնորդությամբ Խորհուրդն իրավունք ունի մինչև կարգապահական միջոցի կիրառման ժամկետի լրանալը վերականգնելու հեռացված պատգամավորի մասնակցությունն Ազգային ժողովի նիստին:

7. Նիստից հեռացման պահանջին չենթարկվելու դեպքում նախագահողը հանձնարարում է Ազգային ժողովի անվտանգությունն ապահովող ծառայությանը իրականացնել պահանջը:

8. Եթե նիստում անկարգություն է առաջանում, և նախագահողն ի վիճակի չէ վերականգնել նիստի բնականոն ընթացքը, ապա նա կարող է մինչև կես ժամով ընդհատել նիստը:

9. Եթե նիստի վերսկսվելուց հետո անկարգությունը շարունակվում է, ապա նախագահողը նիստը հայտարարում է ավարտված

Հոդված 64. Հարցի քննարկման հատուկ ընթացակարգը

1. Առանձին հարցի քննարկման համար Ազգային ժողովը կարող է սահմանել հատուկ ընթացակարգ, որով չի կարող սահմանափակվել զեկուցողների, նրանց հարց տվողների և ելույթ ունեցողների թիվը, ինչպես նաև կրճատվել ելույթի կամ հարց տալու համար Կանոնակարգով ուղղակիորեն սահմանված ժամանակը:

2. Հատուկ ընթացակարգի մասին Ազգային ժողովի որոշման նախագիծ ներկայացնելու իրավունք ունեն՝

1) արտահերթ նստաշրջանը կամ նիստը նախաձեռնողը՝ օրակարգում ընդգրկված հարցի քննարկման մասին.

2) մշտական կամ առանձին նախագծի հարցով ժամանակավոր հանձնաժողովը՝ իր իրավասությանը վերապահված հարցի քննարկման մասին.

3) հիմնական զեկուցողը՝ իր ներկայացրած հարցի քննարկման մասին.

4) քննիչ հանձնաժողովը՝ իր զեկույցի քննարկման մասին.

5) (5-րդ կետն ուժը կորցրել է 25.06.2020 թվականից՝ 22.06.20 ՀՕ-309-Ն (օրենքն ունի անցումային դրույթ) օրենք)

3. Հարցի քննարկման հատուկ ընթացակարգի մասին Ազգային ժողովի որոշման նախագիծը կարող է ներկայացվել մինչև Ազգային ժողովի նիստում հարցի քննարկումը սկսվելը և քվեարկության է դրվում առանց քննարկման:

Հոդված 125. Խորհրդարանական լսումները

1. Խորհրդարանական լսումներ կարող են հրավիրել՝

1) Ազգային ժողովի նախագահը.

2) մշտական ~~հանձնաժողովները, առանձին օրենքի նախագծի հարցով ժամանակավոր~~ հանձնաժողովները՝ իրենց վերապահված ոլորտներին վերաբերող հարցերով.

2. 1) առանձին նախագծի հարցով ժամանակավոր հանձնաժողովը՝ իր իրավասությանը վերապահված նախագծին վերաբերող հարցով.

3) խմբակցությունը՝ իր կամ խմբակցության կազմում ընդգրկված պատգամավորի առաջադրած նախագծին վերաբերող հարցով:

2. Լսումները հրավիրվում են Ազգային ժողովի նախագահի, մշտական կամ ժամանակավոր հանձնաժողովի, ինչպես նաև խմբակցության որոշմամբ

3. Խմբակցությունը յուրաքանչյուր հերթական նստաշրջանի ընթացքում կարող է հրավիրել մեկ լսում:

4. Լսումների անցկացման օրը չպետք է համընկնի Ազգային ժողովի նիստի օրվա հետ:

5. Լսումների արդյունքում կազմված արձանագրությունը հաստատվում է լսումները հրավիրած մարմնի որոշմամբ և տեղադրվում է Ազգային ժողովի պաշտոնական ինտերնետային կայքում:

6. Լսումների հրավիրման, ինչպես նաև արդյունքների ամփոփման ընթացակարգերը սահմանվում են Աշխատակարգով:

Հոդված 162. Հանձնաժողովների գործունեության ապահովումը

1. Աշխատակազմը Ազգային ժողովի հանձնաժողովներին ապահովում է նրանց գործունեության համար անհրաժեշտ միջոցներով:

2. Մշտական հանձնաժողովի գործունեության մասնագիտական սպասարկումն իրականացնում է հանձնաժողովի քարտուղարությունը, որը Աշխատակազմի ստորաբաժանում է, գործում է մշտական հանձնաժողովի աշխատակարգով և Աշխատակազմի կանոնադրությամբ սահմանված կարգով՝ մշտական հանձնաժողովի նախագահի ղեկավարությամբ:

3. Մշտական հանձնաժողովներից յուրաքանչյուրն ունի Աշխատակազմի հաստիքացուցակով սահմանված մեկ համակարգող փորձագետ, առնվազն երկու փորձագետ (մասնագետ) և մեկ գործավար (օգնական): Մշտական հանձնաժողովի գործավարը (օգնականը) աշխատանքի է ընդունվում և ազատվում աշխատանքից համապատասխան հանձնաժողովի նախագահի համաձայնությամբ, իսկ համակարգող փորձագետը և մյուս փորձագետները (մասնագետները) քաղաքացիական ծառայողներ են: Մշտական հանձնաժողովի փորձագետների թիվը կարող է ավելացվել հանձնաժողովի նախագահի առաջարկությամբ՝ Խորհրդի որոշմամբ:

4. Վերակազմակերպված կամ անվանափոխված մշտական հանձնաժողովների փորձագետների (մասնագետների) իրավական վիճակը որոշվում է «Քաղաքացիական ծառայության մասին» օրենքով սահմանված կարգով:

5. Առանձին ~~օրենքի~~ նախագծի հարցով ժամանակավոր հանձնաժողովի, ինչպես նաև քննիչ հանձնաժողովի գործունեության մասնագիտական սպասարկումն իրականացնում են համապատասխան հանձնաժողովի անդամների վճարովի հիմունքներով աշխատող օգնականները կամ Աշխատակազմի համապատասխան մասնագետները:

~~6. Մինչև պատգամավորական էթիկայի հարցերով ժամանակավոր հանձնաժողով ստեղծելը պատգամավորական էթիկայի հարցերով դիմումներն ուսումնասիրում և երկշաբաթյա ժամկետում խմբակցություններին եզրակացություն է ներկայացնում Աշխատակազմի իրավասու փորձագետը (մասնագետը), որը հանձնաժողով ստեղծվելուց հետո իրականացնում է հանձնաժողովի գործունեության մասնագիտական սպասարկումը: Աշխատակազմի իրավասու փորձագետը (մասնագետը) քաղաքացիական ծառայող է:~~

6. Էթիկայի հանձնաժողովի գործունեության մասնագիտական սպասարկումն իրականացնում է հանձնաժողովի քարտուղարությունը, որը Աշխատակազմի ստորաբաժանում է, գործում է հանձնաժողովի աշխատակարգով և Աշխատակազմի կանոնադրությամբ սահմանված կարգով՝ հանձնաժողովի նախագահի ղեկավարությամբ: Հանձնաժողովն ունի Աշխատակազմի հաստիքացուցակով սահմանված մեկ համակարգող փորձագետ, առնվազն երկու փորձագետ (մասնագետ) և մեկ գործավար (օգնական): Հանձնաժողովի փորձագետների թիվը կարող է ավելացվել հանձնաժողովի նախագահի առաջարկությամբ՝ Խորհրդի որոշմամբ: